



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

N 277 - Ա

«ՀԱՅԿԱԿԱՆ ԱԿՆԱԲՈՒԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԻԾ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼՈՒՅՍ ՀԱՅԻ
ԱԶՔԵՐԻՆ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Բարեգործության մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին և 3-րդ կետերը՝

1. Բարեգործական որակել «Հայկական ակնաբուծության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 761,204,824 դրամ արժողությամբ «Լույս հայի աչքերին» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ «Հայկական ակնաբուծության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 00074765) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են «Լույս հայի աչքերին» ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Բիզնես Քոնսալթ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01538458) 2025 թվականի հունվարի 21-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում հաշվապահական հաշվառման և հաշվետվությունների կազմման ծառայությունների մատուցման գործարքը՝ 15,660,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Անտարես» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02519531) 2025 թվականի փետրվարի 10-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի մարտի 20-ն ընկած ժամանակահատվածում տպագրական ծառայությունների մատուցման գործարքը՝ 11,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «ԲԵՅՔԵՐ ԹԻԼԼԻ ԱՐՄԵՆԻԱ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02586575) 2025 թվականի հունվարի 22-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2025-2027 թվականների տարեկան ֆինանսական հաշվետվությունների աուդիտորական ծառայությունների մատուցում 3,900,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

4) «Դեզսերվիս» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00900268) 2025 թվականի հունվարի 24-ին կնքված՝ N 28/25 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում բժշկական նշանակության ապրանքների և դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

5) «ՖԼԵՇ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2025 թվականի հունվարի 20-ին կնքված՝ N 20/01/25 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի մարտի 30-ն ընկած ժամանակահատվածում բենզինի և դիզելային վառելիքի ձեռքբերման գործարքը՝ 15,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

6) «Լիկվոր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01201697) 2025 թվականի մարտի 3-ին կնքված՝ N 001 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում ակնաբուժական, բժշկական պարագաների և դեղորայքի ձեռքբերման գործարքը՝ 6,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

7) «ՋԻԷՆՄԻ-ԱԼՖԱ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00096001) 2023 թվականի փետրվարի 9-ին կնքված՝ N VS0060 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն

ընկած ժամանակահատվածում «Վիրտուալ Սերվերներ» (IR Cloud) ծառայության ապահովման գործարքը՝ 724,824 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

8) «Յուքում» փակ բաժնետիրական ընկերության («Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2014 թվականի մարտի 26-ին կնքված՝ N 2699016 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում շարժական հեռախոսակապի ծառայությունների մատուցման գործարքը՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

9) «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2020 թվականի սեպտեմբերի 22-ին կնքված պայմանագրի (Sim N 380802084410) շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայության մատուցման գործարքը՝ 378,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

10) «Յուքում» փակ բաժնետիրական ընկերության («Յուքում» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2012 թվականի օգոստոսի 30-ին կնքված՝ N 027/30/08/2012 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,440,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

11) «Յուքում» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2020 թվականի մարտի 2-ին կնքված՝ N 4245845 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարքը՝ 405,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

12) «Յուքում» փակ բաժնետիրական ընկերության («Օրանժ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 00024873) 2013 թվականի փետրվարի 7-ին կնքված՝ N 2316125 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրոնային

հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարքը՝ 180,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

13) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» համատեղ ձեռնարկություն փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2005 թվականի ապրիլի 15-ին կնքված՝ N 010510380 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում հեռախոսակապի (չորս քաղաքային գիծ) ծառայությունների մատուցման գործարքը՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

14) «Գազպրոմ Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 00046317) 2013 թվականի հուլիսի 7-ին կնքված՝ N 015.08.13.1896 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում գազի մատակարարման ծառայությունների մատուցման գործարքը՝ 4,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

15) «Հայաստանի էլեկտրական ցանցեր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01520882) 2019 թվականի մայիսի 27-ին կնքված՝ N 3230728 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում էլեկտրաէներգիայի մատակարարման ծառայությունների մատուցման գործարքը՝ 2,500,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

16) «ԷՎՐԻ ԴԵՅ» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 09104669) 2008 թվականի դեկտեմբերի 16-ին կնքված՝ N J137-08 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում խմելու ջրի, մեկանգամյա օգտագործման բաժակների ձեռքբերման գործարքը՝ 600,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

17) «Մաստերկոմպ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 01566751) 2009 թվականի օգոստոսի 1-ին կնքված՝ N MCS 04/2009 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում 7 համակարգիչների, ինչպես նաև այլ

համակարգչային տեխնիկայի վերանորոգման, սպասարկման, ախտորոշման, ցանցին միացման ու համակարգչային ցանցի սպասարկման ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,080,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

18) «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման գործարքը՝ 100,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

19) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2017 թվականի հոկտեմբերի 6-ին կնքված՝ N 119899476 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարք՝ 299,999 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

20) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2017 թվականի նոյեմբերի 7-ին կնքված՝ N 119899476 պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարք՝ 299,999 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

21) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2018 թվականի փետրվարի 8-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարքը՝ 1,499,999 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

22) «Տելեկոմ Արմենիա» բաց բաժնետիրական ընկերության («ԱրմենՏել» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 02500052) 2017 թվականի հոկտեմբերի 18-ին կնքված պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028

թվականի ապրիլի 25-ն ընկած ժամանակահատվածում շարժական էլեկտրոնային հաղորդակցության ծառայությունների մատուցման գործարք՝ 599,999 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

23) «Վիվա Արմենիա» փակ բաժնետիրական ընկերության («ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերություն) հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի հոկտեմբերի 27-ին կնքված՝ N 19722614 (բաժանորդ N 837370) պայմանագրի շրջանակներում 2025 թվականի ապրիլի 25-ից մինչև 2028 թվականի մարտի 25-ն ընկած ժամանակահատվածում ֆիքսված էլեկտրոնային հաղորդակցության ծառայության մատուցման գործարքը՝ 450,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3. «Հայկական սկնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամին՝ մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից կատարված աշխատանքների, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱԴԵՏ

Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան